



Ա.

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

**ԳԻՈՐԳ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ
ՃՆՀԱՍՄԵՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԸՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԸՊԵՏ
ԵՒ ԿԱԹՈՑՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ, ԺԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏ-
ՐԻԱՐՔ ՀԱՄԵԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԺԱՐ ԱԹՈՒԹՈՅ ԱՌԱՔԵ-
ԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷԶՄԻ-
ԱԾՆԻ.**

*Մեծարոյ Անդամոց համադոււմարի Կաղմակերպու-
թեանց Հայոց Տաճկական-Հայաստանի, սիրեցեալ որդւոց
Մերոց հոգևորաց, հարազատից Մ. Աթոռոյս Մերոյ ս. Էջ-
միածնի, ողջոյն և օրհնութիւն Հայրապետական բաղմասցի
առ ամենեւեանսդ:*

*Ուրախութեամբ սրաի է, որ գիտեմք համադոււմարի-
րէզ, որ ունի դոււմարիլ և բանալ այսօր յերևան ի ձեռն*

կազմակերպութեանց հայկականից և Հայոցդ, որ ի սահմանս Տաճկական Հայաստանի, ի խորհրդակցութիւն և յեզրակացութիւն ցանկալի կարեաց, պիտոյից և ըղձից դադիթական զաւակաց Մերոց, որք ասպաստանեցան աստա Մեզ ի սահմանս Կովկասու և այլուր:

Ապա և խնդամիտ ողջունիւ է, որ զամբ ի ձեռն առանձինն ներկայացուցչի Մերոյ, Գեր. Տ. Գէորգ եպիսկոպոսի, որպէս եղև խնդիր իսկ ի Ձէնջ, ի ձեռն կազմակերպչացդ համագումարիդ, յայտ առնել յըսկիզբն բարի ձեռնարկութեանդ և օգտաշատ խորհրդակցական ժողովոյդ զՀայրապետականիս Մերոյ զուրախակցական ձայն, զի սիրտ Հօրս հանրականի լցեալ է ընդ ձեռնարկութիւնդ, որ ի վաղուց հետէ ակն ունէսք տեսանել ի գլուխ յանգեալ, այլ դժուարութիւնք և արգելանս բազմապիսիս շետուն իրագործիլ ցանկութեան Մերոյ և Ձեր ամենեցունցդ:

Գործ և խնդիր դժուարին կայ առաջի Ձեր ամենեցունց, որոց եկեալ միակամ և միասիրտ ի խորհրդակցութիւն համատարր, ունիք արգասաւորել զհետեանս նպատակին, յոր ձգտիք՝ ի սփոփումն նեղասակիր վիճակի դադիթական զաւակաց Մերոց և եզրարց Ձերոց և քերց, ի շինութիւն աւերեալ անտեսութեան նոցա, ի կանգնումն հայրենեաց, զոր լքինն ակամայ, ի ներքին կազմակերպութիւն նոցա և այլ և այլ խնդրոց, զորս պարագայք և ընթացք խորհրդակցութեանցդ ունի դնել առաջի Ձեր ի լուծումն և յածելն ի կատար:

Եւ Մեք յուսալ յուսամք զի խոհական ոգի իմաստութեան և շրջահայեաց նկատառութեան ունի թաղաւորել ի Ձեզ և տալ դիւրացուցանել զճնունդ և զարգասիս խորհրդակցութեանդ: Ուստի և զօրհնութիւն Տեառն հայցեմք ի գլուխ Ձեր ամենեցունցդ յըսկիզբն ձեռնարկութեանդ յաջողեացէ Տէր զգործս ձեռաց Ձերոց, արդիւնաւորս արասցէ զխորհուրդս մտաց Ձերոց, որ ի բարին հանրական, զի և սիրտ Հօրդ Ձերոյ հանրականի բերկրեացի ի վիճակ բարօր որդւոցս Իմոց, զոր սիրեմք յուսալ տեսանել զկնի

խորհրդակցութեանդ ոչ անազան:

Ողջ լերուք, զօրացեալք ամենեքեան ի Տէր և օրհնեալք ի Մէնջ, Ամէն:

Գ Է Ո Ր Գ Ե

ԿԱԹՈՒՂՈՒԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի 1 Մայիսի 1917 ամի

Ըստ Տոմարիս ՌՅԿԶ

ի Հայրապետութեան Մերում Զ. ամի
յԱրարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
ի Վաղարշապատ

Թ. 748

Գ Է Ո Ր Գ Ե ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱ-
սանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ Կաթու-
ղիկոս Ամենայն Հայոց, Մայրազոյն Պատրիարք Համագ-
գական Նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական
Մայր Եկեղեցոյ Արքայ Կաթուղիկէ Էջմիածնի.

Անդամոց Սրբազումար միաբանական Ռեխտիս Մ. Ա-
թոռոյս Ս. Էջմիածնի, գերաշնորհ Արքեպիսկոպոսաց, գերա-
պատիւ եպիսկոպոսաց, բարձրապատիւ վարդապետաց և բա-
րեշնորհ արեղայից, ամենեցունց, որ աստ ի Ս. Աթոռս, և
տարակաշերտց յայլ և այլ տեղիս, ըստ պաշտամանցն իւր-
եանց, բազմապի ողջոյն և օրհնութիւն Հայրապետական:

Հիմն ամենայն հաստատութեան և կազմութեան զի-
տելով կանոնական հիմունք անձնիւր հաստատութեան,
յայդ իսկ և ճանաչեմք պատկեր նորա և նշան կենդանու-
թեան, ուստի և յօրէ ամբառնալոյ Մերոյ ի Գահ բազմե-
բախտ Հօրն Մերոյ Ս. Լուսաւորչի ունէաք ի մտի հանա-
պազ տալ կանոնական պատկեր կենաց միաբանութեանս
Մեծի Տանս և Սրբոյ Աթոռոյս, յոր հային ամենայն հաստա-
տութիւնք միաբանակցականք և որ օրինակ և տիպար այլոց
համանման հաստատութեանց ունի լինել, եթէ ըստ զըրիցն
և եթէ, ըստ վաղնջականութեան կենաց:

Երջանկայիշատակ նախորդաց Մերոց ևս ցանկութիւն էր ունել կանոնադրութիւն հաստատուն, այլ խոչնդոս ժամանակին և պէսպէս արգելաօրիթ խափան ջերմ ցանկութեանց նոցա լեալ, մինչ ցՄերս ժամանակ ետուն յետա ընդգրկել կազմութեան և հաստատութեան կանոնադրութեանդ:

Արդ բարւոք յաշս Մեր համարեցաւ և ժամ դիպող ունել կանոնադրութիւն հաստատուն և անշեղ վասն Մեծի Ուխտիս, որ կոպար անսայթաք ունի լինել մէն մի անդամոյ, որ ընկալեալն է ի նա ըստ արժանեացն և ըստ ձրիցն շնորհաց և որք ունինն մտանել ի նա ըստ կոչմանն իւրեանց և ըստ ըղծիցն:

Ուստի սլատուէր տամք անդամոց Մեծի Ուխտիս, որ աստ առ Մեզս ենն, դումարիլ ի ժողով և օժանդակութեամբ ամենաբաւական շնորհաց Տեառն արկանել ձեռն ի գործ ի յօրինումն կանոնադրութեան, ի ձեռն առանձինն յանձնախմբի ի կարող անդամոց Ուխտիս և զկնի ընթերցման նախարդակի կանոնադրութեանն ի ժողովի միաբանակից եղբարց, զվերջնական խմբագրական նախագիծ առաջի առնել ի Մերս վերջնական հաւանութիւն և հաստատութիւն, որպէս Մեծի Վանահօր Ս. Ուխտիս և Հայրապետի Ամենայն Հայոց, որում կայ վերապահեալ կանոնական իրաւունք հսկողութեան կենաց և կանոնադրութեանց վանօրէից Ս. Եկեղեցւոյս:

Օրհնութիւն Տեառն հայցելով ի գլուխ Ձեր ամենեցունց, զշնորհս ամենայն բարեաց Պարգևողի խնդրեմք վասն ամենեցունցդ, զի ի գործդ այդ պիտանի աւագագոյն անդամոց երևիլ ի նա հանձարոյ զգաստութեամբ և փորձառականին կենաց ուսձացեալ խելամտութեամբ, զանցելոյն ունելով առաջի աշայ օրինակ բարի, կրտսերագունիցն ի փորձ աւագագունիցն ունելով հաւատ, զիւրեանս գիցեն պիտանաւորութիւն ըստ պատրաստութեանն ի գործ, որ և կոպար և օրինակ ունի լինել այլ միաբանական հաստատութեանց:

Ողջ լերուք ամենեքեան, դօրացեալ ի Սէր Տեառն

յօզուտ և ի շինութիւն Մեծի Տանս և Սրբոյ Ռւխտիս և օրհնեալք ի Մէնջ, Ամէն:

Գ Է Ո Ր Գ Ե.

ԿԱԹՈՒՂՈՒԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի 15 մայիսի 1917 ամի

Հատ Տումարիս ՌՅԿԶ

Ի Հայրապետութեան Մերում Զ. ամի

յԱրարտեան Մայր Աթոռ

Ս. Էջմիածնի

Ի Վաղարշապատ

Թ. 643

Գ Է Ո Ր Գ Ծ Ա Ռ Ա Յ Յ Ի Ս ՈՒ Ս Ի Ք Բ Ի Ս Տ Ո Ս Ի Ե Ի Ա Ն Հ Ա-
սանելի կամօքն Ասուծոյ Եպիսկոպոսապետ և Կաթու-
ղիկոս Ամենայն Հայոց, Յայրագոյն Պատրիարք Համազ-
գահան նախամեծար Աթոռոյ Արարտեան Առաքելահան
Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի.

Անդամոց նախապատրաստական ժողովոյ հոգևորական
դասու Ս. Եկեղեցւոյս, գերաշնորհ Արքեպիսկոպոսաց, գե-
րապատիւ Եպիսկոպոսաց, բարձրապատիւ վարդապետաց,
արժանապատիւ աւագ քահանայից, բարեկրօն քահանայից,
հարազատից Մօրս Մերոյ Լուսոյ Կաթուղիկէ Ս. Եկեղե-
ցւոյս, հոգևոր որդւոց Մերոց, ողջոյն և օրհնութիւն Հայ-
րապետական առատացեալ՝ խնդալ ի Տէր:

Զհետ երթալ խնամոց բարգաւաճման բարեկարգու-
թեան Ս. Եկեղեցւոյս, ընդ ամենայն մասանց, պարտիք
Մեր լեալ անմիջական, որպէս ընտրեալ Գլխոյ Ս. Եկե-
ղեցւոյս, զՁեզ գամենեսեանսդ աստ ի Մայր Աթոռս յօժա-
րեցաք դումարել ի ժողով, զի զխնդրոց, զորս առաջի Ձեր
գնի ի ծոց Կոնդակիս, առեալ խորհուրդ և փոխանակու-
թիւն մտաց, առաջի Մեր արարեալ զեզրակացութիւն Ձեր,
ըստ աւանդից և կարգաց, ըստ հարկի ժամանակիս և ըստ
պահանջից Ս. Եկեղեցւոյս զվերջնականն Մեր եզրափակու-
թիւն խնդրոց և կարեաց՝ մարթացուք դստանել հնարս ելից:
Զանդամս համագումար նախապատրաստական ժողո-

վոյդ է՝ որ ըստ անձին ծանօթութեան, է՝ որ ըստ արժանեացն, ըստ լրոյ և ըստ էութեանն, է՝ որ ըստ ընտրութեան ի համադասից եկեալ ի մի, գիտեմք աղ բարի և համեմիչ՝ դասու, որ անդստին յառաջին իսկ աւուրց բարոյական վերածնութեան ազգիս, առաջնորդ հոգւոց, մտաց և բարոյականին լեալ կենցաղոյ ժողովրդեան Իմոյ, միմիայն գրարիոք կենցաղ հոգևորին նոցա խոկայր, զհետ երթայր և առաջնորդ լինէր:

Եւ արդ զի ըստ հաւատոցս, նոյն ոգի և ի Ձեզ, յամենեսեանսդ, տեսանել ըղձամբ, ուստի պատուէր տամք արկանել ձեռն ի գործ յ12 ամսոյս, և յընթացս միոյ եօթնեկի, յաւարտ ամել զեղեալն ի վերայ Ձեր զպարտիս:

Աղաչեմք զԱստուած հեղուլ ի Ձեզ զշնորհս հոգւոյն Իւրոյ, զի խոհական խելամտութեամբ, զգաստութեամբ և բանիւ հանճարոյ, սգւով իմաստութեան և կշռադատ հեռատեսն զգուշաւորութեամբ մատչիք ի գործ, յոր կոչեցաքդ, զի խորհրդակցացդ հատուած փոքր զիմաստութեան մեծի ամբողջականին բերեալ յինքեան ի յայտ և յապացոյց, ի բարիոք ածեալ ի վիճակ զինդրոցդ լուծումն, ի հոգի բերկրեալ ելցէ ի Մեծի Աթոռոյս, եթէ զոր ինչ ունել և բերել կարէաք ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյս՝ ի սէր և ի հոգի բերաք բոլորանուէր:

Օրհնեսցէ Տէր զգործ ձեռաց Ձերոց ի զլուխ գործոյդ և զվախճանն պսակեսցէ յաշողութեամբ, զի և Մեր բերկրեալ ընդ իմաստութիւն որդւոց Մերոց սիրելեաց և հոգևորից, Տեառն տացուք զհաշիւ տնտեսութեան Մերոյ, եթէ արարաք ընդ անդամոց Ս. Եկեղեցւոյս գրարին և զօգուտ հասարակաց:

Ողջ լերուք, օրհնեալք ի Տէր և ի Մէնջ. Ամէն:

Գ Է Ո Ր Գ Ե.

Կ Ա Թ Ո Ւ Ղ Ի Կ Ո Ս Ա Մ Ե Ն Ա Յ Ն Հ Ա Յ Ո Ց

յ12 յունիսի 1917 ամի

Ըստ Տոմարիս ՌՅԿԶ

Ի Հայրապետութեան Մերոյ Զ. ամի
յԱրարատեան Մ. Աթոռ Ս. Էջմիածնի
ի Վաղարշապատ

Թ. 1036